**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**
**ՀՐԱՄԱՆ**

N 2076-Ա/2 «16» դեկտեմբերի, 2021 թ.

# ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 4-րդ գլխի 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը՝

**Հրամայում եմ**

1. Կազմակերպել Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման համար հայտերի ընտրության մրցույթ:
2. Հաստատել Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման համար հայտերի ընտրության մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված N 1- ի:
3. Հաստատել Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման հայտերի ընտրության մրցույթին մասնակցության Հայտի ձևը՝ համաձայն Հավելված N 2-ի:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

*Հավելված N 1*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի*
*«16» դեկտեմբերի, 2021 թ.*
*N 2076-Ա/2 հրամանի*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում Եվրոպական Միության «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրին, ինչպես նաև միջազգային այլ ծրագրերին Հայաստանի Հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և բուհերի, ինչպես նաև վերջիններում ընդգրկված գիտական խմբերի և առանձին գիտնականների մասնակցությունը խթանելու նպատակով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեն հայտարարում է ՄՐՑՈՒՅԹ՝ գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման համար: Մրցույթի արդյունքում նախատեսվում է ստեղծել գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոն, որը.

- կհավաքագրի, կվերլուծի և հնարավոր շահառուների շրջանում կտարածի Եվրոպական Միության «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթների մասին տեղեկատվությունը,
- հայտատուներին և ծրագրի հնարավոր շահառուներին կմատուցի խորհրդատվական ծառայություններ՝ Եվրոպական Միության «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթներին մասնակցության կարգի և ժամկետների վերաբերյալ,
- կհամակարգի Եվրոպական Միության «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրի թեմատիկ ուղղություններով նշանակված ազգային կոնտակտային անձանց աշխատանքը,
- կմշակի միջազգային ասպարեզում գործող դրամաշնորհային այլ ծրագրերի և նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվական բազա:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ գիտության կոմիտե մինչև 2022 թվականի հունվարի 5-ը:

*Հավելված N 2*

*ՀՀ ԿԳՄՍ նախարարի*
*«16» դեկտեմբերի, 2021 թ.*
*N 2076-Ա/2 հրամանի*

**ՀԱՅՏ**

**ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ**

1. Կազմակերպության անվանումը _____
(հայերեն, անգլերեն, ռուսերեն)
2. Գործունեության ոլորտը _____
3. Կազմակերպության տնօրենի
   - ազգանունը, անունը, հայրանունը
   _____
   (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
   - գիտական աստիճանը _____
   - հեռախոսը _____
   - էլեկտրոնային հասցեն _____
4. Կազմակերպաիրավական ձևը (ՊՈԱԿ, ՓԲԸ, Հիմնադրամ և այլն) _____
5. Գերատեսչությունը _____
6. Պահանջվող հաստիքների քանակը _____
7. Պահանջվող ֆինանսավորման ծավալը _____ հազար դրամ
8. Կենտրոնի տնօրենի ստորագրությունը _____
9. Գերատեսչության ղեկավարի ստորագրությունը _____

«____» _____ 202 թ. Կ. Տ.

# 1. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

---

* *Ներկայացնել Կենտրոնի գիտական, գիտատեխնիկական կամ գիտատեխնոլոգիական գործունեությանն աջակցության ծրագրի տեսլականը, հիմնական դրույթները և համառոտ բովանդակությունը: Հիմնավորել Կենտրոնի կողմից իրականացվելիք աշխատանքների ուղղության (ուղղությունների) և դրանց իրագործման համար անհրաժեշտ կատարողների կազմը: Նկարագրել Կենտրոնի ստեղծման, պահպանման և/ կամ զարգացման համար առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները, միջազգային, այդ թվում՝ ԵՄ գիտական, գիտատեխնիկական, գիտատեխնոլոգիական կամ նորարարական ծրագրերին աջակցության ուղղությամբ Կազմակերպության և կատարողների ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները: Հնարավորության դեպքում ակնկալվող արդյունքները ներկայացնել չափելի մեծություններով (մինչև 7 էջ):*

## 2. ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

| h/h | Պաշտոն | Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ) | Հաստիքների քանակ | Ընդհանուր աշխատավարձ (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |

Կազմակերպության տնօրեն՝ _____ _____
(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Գերատեսչության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

«____» _____ 202 թ. Կ. Տ.

## 3. ԿԵՆՏՐՈՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

| h/h | Հոդվածի անվանումը | Ֆինանսավորման ծավալը<br>հազար դրամ) |
|---|---|---|
| 1. | Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը | |
| 2. | Տնտեսական ծախսեր, այդ թվում՝<br>ա) էներգետիկ ծառայություններ,<br>բ) կոմունալ ծառայություններ,<br>գ) կապի ծառայություններ | |
| 3. | Այլ ծախսեր, այդ թվում՝<br>ա) գույք և սարքավորումներ,<br>բ) նյութեր և միջոցներ,<br>------- | |
| 4. | Ընդամենը | |

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
*(ստորագրություն)* *(Ա.Ա.Հ.)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____
*(ստորագրություն)* *(Ա.Ա.Հ.)*

«____» _____ 202 թ. Կ. Տ.